ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 27.02.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 գնման պայմանագրում 30.04.2026թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 26.03.2026թ. N 372-Ն որոշում
Փոփոխության նկարագրություն	Ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.14 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

27.02.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 գնման պայմանագրի

ք. Երևան 30.04.2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Վ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.03.2026թ. N 372-Ն որոշումը և **ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի կենտրոնի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 27.02.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011055457
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Վ. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ
Ք. Երևան, Խաղաղ Դոնի 1, նրբ. 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003584140100
ՀՎՀՀ 00442109

Տնօրեն՝

_____ Վ. Գևորգյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
27.02.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 գնման պայմանագրի
30.04. 2026թ. կնքված N 2 համաձայնագրի
«Հավելված N3
27.02.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը		դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			2025թ. վճարված գումար	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45221142/1	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի կենտրոնի կառուցման աշխատանքներ	556 480 615	-	320 726 300	320 726 300	779 785 300	779 785 300	779 785 300	779 785 300	779 785 300	779 785 300	779 785 300	779 785 300	779 785 300	**779 785 300**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: »:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011055457
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ
Ք. Երևան, Խաղաղ Դոնի 1, նրբ. 7
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570003584140100
ՀՎՀՀ 00442109
Տնօրեն՝
Վ.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

AMERIABANK

29.04.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.13522.26

Բենեֆիցիար՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.13522.26
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 14,801,240.00 (տասնչորս միլիոն ութ հարյուր մեկ հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին և ևս 365 օրացուցային օր երաշխիքային ժամկետին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 01 մայիսի 2028թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (a.manucharyan@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

«AMERIABANK» CJSC CORPORATE AND INVESTMENT BANKING DEPARTMENT FOR CONTRACTS AND DOCUMENTS

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

29.04.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.13523.26

Բենեֆիցիար՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.13523.26
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընդունող) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 44,403,800.00 (քառասունչորս միլիոն չորս հարյուր երեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին հաջորդող ինսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 01 հուլիսի 2027թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (a.manucharyan@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

«AMERIABANK» CJSC
CORPORATE AND
INVESTMENT BANKING
DEPARTMENT
FOR CONTRACTS
AND DOCUMENTS

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

Armenuhi Manucharyan

From: Trade Finance <TradeFinance@ameriabank.am>
Sent: Wednesday, April 29, 2026 2:38 PM
To: 'a.manucharyan@minurban.am'
Cc: Trade Finance
Subject: ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4_Բանկային երաշխիքների թողարկում
Attachments: 523_29042026120243.PDF; 522_29042026120232.PDF

Հարգելի գործընկեր,
Սույնով հաստատում ենք, որ 29.04.2026թ. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից թողարկվել է՝

- O.AB.100.12CIB.PIED.0.13522.26 Պայմանագրի ապահովումը
- O.AB.100.12CIB.PIED.0.13523.26 Որակավորման ապահովումը

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի օգտին «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի հետ կնքվելիք N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/4 պայմանագրի գծով:

Երաշխիքների բնօրինակից արտատպված տարբերակները՝ կից:

Հարգանքով՝

I'm Monika Hayrapetyan
Specialist, Payment instruments and escrow division, Ameriabank
+37410 56 11 11 | www.ameriabank.am | 2 V. Sargsyan Street, Yerevan, RA

#bankaboutpeople